ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ընդդեմ Blognews.am կայքի՝ ազատ լուսանկարիչ Գերման Ավագյանի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Արամ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Լևոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ագնեսա ԽԱՄՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Օլգա ՍԱՖԱՐՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դիտորդ մարմնին է դիմել ազատ լուսանկարիչ Գերման Ավագյանը՝ ընդդեմ Blognews.am կայքի, որի ֆեյսբուքյան էջում հրապարակվել են իր լուսանկարները՝ առանց հղումների ու հեղինակի անունը նշելու: Ըստ Գերման Ավագյանի, ինքը փորձել է կապվել կայքի ղեկավարության հետ՝ հայտնելու իր դժգոհությունները եւ պահանջելու հեռացնել նկարները, սակայն արդյունքի չի հասել:

Դիտորդ մարմինն իր 2015 թվականի սեպտեմբերի 24-ի նիստում քննարկեց վերոնշյալ բողոքը եւ առաջնորդվելով իր աշխատակարգի 5-րդ հոդված 5.1 կետով, ըստ որի՝ «ԴՄ-ը ինքնակարգավորման նախաձեռնության անդամների կողմից կամ սույն աշխատակարգով նախատեսված դեպքերում՝ ոչ անդամների կողմից Կանոնագրի խախտման վերաբերյալ բողոքների քննության հիմքով կայացնում է կարծիք-եզրակացություն», ինչպես նաեւ՝ նույն հոդվածի 5.8 եւ 5.9 կետերով, արձանագրեց.

1. 2015 թվականի սեպտեմբերի 14-ին Blognews.am կայքի ֆեյսբուքյան էջում (https://www.facebook.com/blognews.am/photos/a.349665788394787.104732.345784302116269/1157319774296047/?type=3) հրապարակվել են ազատ լուսանկարիչ Գերման Ավագյանի հեղինակած լուսանկարները՝ առանց հեղինակի անվան, սկզբնաղբյուրին հղման եւ, ըստ հեղինակի՝ տեխնիկական միջամտություններով: Սեպտեմբերի 24-ի դրությամբ այդ հրապարակումն ունեցել է 7500-ից ավելի հավանություն (like), 494 վերահրապարակում (share) եւ 120-ից ավելի մեկնաբանություն:

2. Համաձայն «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 4-րդ մասի ը կետի՝ **«լուսանկարչական եւ նման եղանակով ստեղծված ստեղծագործությունները»** հեղինակային իրավունքի օբյեկտ են, եթե համապատասխանում են նույն հոդվածի առաջին մասին, այսինքն հանդիսանում են **«հեղինակի ինքնուրույն կամ**

այլ հեղինակների հետ իրականացրած ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունք (այսուհետ՝ ստեղծագործություն), որն արտահայտված է բանավոր, գրավոր կամ այլ օբյեկտիվ ձևով, ներառյալ՝ մշտապես կամ ժամանակավոր պահպանվող էլեկտրոնային ձևը, անկախ ստեղծագործության ծավալից, նշանակությունից, արժանիքներից ու ստեղծման նպատակից»:

3. Տվյալ լուսանկարները ազատ լուսանկարիչ Գերման Ավագյանի հեղինակային ինքնուրույն աշխատանքի յուրօրինակ արդյունք են: Այդ աշխատանքները կատարելու վրա հեղինակը ծախսել ժամանակ եւ միջոցներ, այնուհետեւ դրանք ներկայացվել են ցուցահանդեսներում եւ հրապարակվել հեղինակի անձնական բլոգում (http://www.hermanavakian.com/#a=0&at=0&mi=2&pt=1&pi=10000&s=0&p=4) ՝ **«Born after Death»** խորագրով :

4. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետը տպագիր եւ հեռարձակվող լրատվամիջոցներից զատ սահմանում է նաեւ ցանցային լրատվության միջոց հասկացությունը որպես՝ **«...որոշակի հասցե ունեցող, անսահմանափակ թվով անձանց համար հասանելի եւ լրատվություն ներառող տեղեկատվական պաշար՝ անկախ թարմացման պարբերականությունից, պահման ժամանակի տեւողությունից եւ այլ չափանիշներից»:** Հետեւաբար՝ Blognews.am-ը, ըստ այս սահմանման, զանգվածային լրատվության միջոց է, իսկ նրա ֆեյսբուքյան էջը՝ այդ լրատվամիջոցը շուկայում առաջ մղելու գործիք:

5. Blognews.am-ի ֆեյսբուքյան էջի հրապարակումը չի համապատասխանում «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 22-րդ՝ «Ստեղծագործության ազատ օգտագործումը» հոդվածի ոչ մի կետին: Հետեւաբար այդ հրապարակմամբ ոտնահարվել են հեղինակի՝ Գերման Ավագյանի հեղինակային իրավունքներն ու օրինական շահերը:

6. Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրի 2.4. կետը պահանջում է. «հարգել հեղինակային իրավունքը, բացառել գրագողությունը, մեջբերումներ եւ արտատպություններ կատարելիս նշել աղբյուրները»: Blognews.am-ի ֆեյսբուքյան էջի հրապարակումը չի համապատասխանում նաեւ էթիկական այս պահանջին. հետեւաբար, այն օրենքի խախտում լինելուց զատ նաեւ էթիկական չափանիշների խախտում է:

Ընդունվել է Զանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմնի 2015 թվականի սեպտեմբերի 24-ի նիստում, ԴՄ հետեւյալ կազմով՝

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, «Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ
Արա ՂԱԶԱՐԱՆ, իրավաբան

Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ, «A1+» հեռուստաընկերության տնօրեն
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 39-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: